ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆԻ ՎԱՔԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Մայիսի 16-ին, Հիսուս Փրկչի Համբարձման տոնի առիթով, Սևանի Սբ. Առաքելոց վանքում, հընթացս սուրբ և անմահ պատարագի, ձեռամբ Արարատյան Թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, Սևանի Վաքգենյան դպրանոցի սաներ Տիգրան Գափոյանը, Արարատ Չուփուրյանը, Արմեն Խաչատրյանը, Ադամ Տոնիկյանը, Հարություն Սարիբեկյանը, Հրանտ Պետրոսյանը, Արթուր Հայրապետյանը, Արտակ Արթենյանը, Հրաչյա Խաչատրյանը սարկավագական ձեռնադրության արժանացան:

Քարոզխոսքի ընթացքում Գարեգին Սրբազանը փառք տվեց Աստծուն, որ Իր Սմենակալ Աջը մնայուն կերպով հովանի դարձրեց Հոգևոր Դպրանոցի վրա և տարիներ առաջ փայփայած իր երազն այսօր իրականություն դարձրեց: Սրբազանն ավելացրեց նաև, որ հոգևոր այս հաստատությունն հիմնելիս ինքը մեկ նպատակ է ունեցել՝ կերտել հոգևորականաց մի սերունդ, որը մեր ժամանակների ոգուն հարազատ, ունենա առավել բարձր աստվածաբանական գիտելիքներ և մեր հայրերի սուրբ ժառանգությունը յուրացրած՝ հասու լինի մեր պատմության խորհրդին, եկեղեցու առաքելությանն ու ընդհանրական սուրբ եկեղեցու հայրերի ոգուն: Իր խոսքում ի մասնավորի Սրբազան Հայրն ասաց.

- Այսօր այս սուրբ խորանի առջև Հոգևոր դպրանոցի ինը սաներ ծնրադրեցին և մեր ձեռնադրությամբ ստացան սարկավագության աստիճան: Վեց տարիներ առաջ էր, երբ այցելեցինք Սևանի այս կղզին և կանգնելով Խրիմյան Հայրիկի կողմից հաստատված ընծայարանի շենքի առաջ, մտահղացանք. գեղատեսիլ այս վայրում հիմնել կրթական մի հաստատությունը, որը կոփի և մեր եկեղեցուն ու ժողովրդին արժանավոր հոգևոր սերունդ հասցնի: Դժվարին եղան այս վեց տարիները ոչ միայն դասախոսական ու տեսչական կազմի, այլ նաև սանուց համար, սակայն կենցաղային դժվարին այդ պայմանները որքան որ նպաստող չէին կրթական կյանքի կազմակերպմանը, այդուհանդերձ առավելապես օգտակար էին սանուց նկարագրի, կամքի, ոգու կերտման և ձևավորման համար: Այսօր ես երջանիկ եմ, և ուրախ է իմ հոգին, որ հոգևոր այս հաստատությունը նորովի զգեստավորում է ստանում: Մի քանի ժամ ևս և սքեմավորները պիտի շատանան այս թերակղզու վրա, պիտի քայլեն դեպի այս եկեղեցին աղոթելու և իրենց ուխտը Աստծո առջև, մեր ժողովրդի առջև կատարելու: Ուխտ ծառայության, ուխտ նվիրումի, ուխտ զոհաբերության և անմնացորդ ու հաստատուն հավատքի:

Սարկավագությունը ծառայության մի աստիճան է, սպասավորության մի պաշտոն: Եվ ես հավատում եմ, որ այն աղոթքները, որ ընթերցեցինք այստեղ, իրապես Սուրբ Հոգու շնորհներով պիտի լեցնեն ձեզ, պիտի զորացնեն ձեզ, պիտի գեղեցկացնեն ձեր միտքն ու հոգին, ձեր սիրտը և ինչու չէ՝ նաև արտաքինը:

Մեր հիմնական նպատակը, երազն ու ձգտումը այն է, որպեսզի այս հաստատությունում մենք կարողանանք պատրաստել հավատավոր հոգևորա-

կաններ, նվիրյալ հոգևորականներ: Եվ ես հավատում եմ, որ իրապես դուք պիտի կարողանք արժանավոր մի սերունդ լինել, անմիջական շարունակողները լուսավոր այն գործի, որ սկսել են մեր հայրերը՝ վանականները այս Սևանի կղզում ապրած ու գործած: Եվ այդ առումով ես կուզեմ համբարձման այս տոնի առիթով բերել ձեզ պատգամը մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի, թե սիրեք միմյանց: Սիրեք միմյանց, որովհետև այդ սիրով է պայմանավորված ձեր աստվածսիրությունը:

Վերջում Սրբազան հայրը, շնորհավորելով նորընծա ձեռնադրյալ սարկավագներին, հույս հայտնեց, որ նրանք կլինեն տաճար Աստուծո և կգործեն ի փառս Աստուծո, ի բարօրություն մեր ժողովրդի:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 19 ին Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդանիստ Սբ. Սարգիս եկեղեցում, սբ. պատարագի ընթացքում, ձեռամբ Թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, քահանայական սրբազան ձեռնադրություն և օծում ստացավ Վարուժան սարկավագ Տերտերյանը: Մայիսի 18-ին, երեկոյան ժամերգությանը, տեղի ունեցավ «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտավիլակությամբ Տ. Բագրատ աբեղա Գասպարյանի, որը վկայեց նորընծայի հոգեկան ու մտավոր պատրաստվածության ու արժանիքների մասին: Ապա նորընծան խոստացավ «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա», «ամենայն պատրաստութեամբ և առանց ծանծրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ Հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց»:

Կոչման արարողության ավարտին Վարուժան սարկավագը հրապարակորեն արտասանեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւն»-ը ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևի:

Հաջորդ օրը, հընթացս Սբ. Պատարագի, տեղի ունեցավ նորընծայի ձեռնադրությունը: Պատարագիչ Սրբազան Հայրը սրբալույս մյուռոնով օծեց նորընծայի ճակատն ու ձեռքերը՝ վերանվանելով նրան Տ. Վարուժան քահանա Տերտերյան: Այնուհետև Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանը նորընծային տվեց «զսկիհ և զմաղզմայն»՝ ի նշան պատարագ մատուցելու իշխանության: Նորընծա քահանան, դառնալով ժողովրդին, տվեց իր առաջին օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»;

Ապա Գարեգին Սրբազանը շնորհավորական ու խրախուսական քարոզով դիմեց նորընծա քահանային՝ մաղթելով նրան հավատքի ուժ և կարողություն՝ գործելու ի փառս Աստուծո, ի պայծառություն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո: